ԽՆԱՄԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ*

Լիանա Դալլաքյան

Հայ քրիստոնեական իրականության մեջ ամուսնությունը ենթադրում է 2 փուլ՝ նշանը[1] կամ նշանադրությունը և բուն պսակը:

Նշանադրությունը ծագել է հեթանոսական շրջանում և իր գոյությունը պահպանել ողջ ավատական Հայաստանում: Հաղթանակած քրիստոնեությունը միջամտեց այդ հարաբերությանը, նորմավորեց նրա առանձին պայմանները, արգելեց հեթանոսությանը հարազատ որոշ սովորույթներ և փորձեց ներգործության կանոնական միջոցներով ամրապնդել նշանադրության հիմքերը[2]: Հայ եկեղեցական կանոնական կարգավորումներում նշանադրության հետ կապված խնդիրները լայն ուշադրության չեն արժանացել, սակայն, այնուամենայնիվ, դրանցում նշանադրության հետ կապված կանոններ տեղ գտել են: Կանոնական իրավունքի ներխուժումը նշանադրության ասպարեզ ունի իր հիմնավոր բացատրությունը: Բանն այն է, որ հոգևոր դասը պսակադրության պայմանները և կարգը հռչակելով իր իրավասությունը, չէր կարող անուշադրության մատնել նշանադրությունը, քանի որ դրանք միմյանց սերտորեն աղերսված էին[3]:

Նշանադրությունը ամենից առաջ ազգային-ժողովրդական բնույթ ունեցող արարողություն է, որը նախորդում է Պսակի խորհրդին և համարվում է երկու կողմերի միջև համաձայնության հաստատումն այն բանի, որ մի որևէ աղջիկ հայտարարվում է մի որևէ տղայի նշանածը: Ամուսնու-

---

* *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6D202 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

1 nišān - նշան բառն ունի պահլավական, պարսկական ծագում՝ «նշան, նիշ, դրոշմ, հետք, զինանշան, դրոշակ, նպատակ» իմաստներով: Nišān - հայական նշանի իմաստով տարածված է եղել նաև վրացիների, բուլղարների, լեհերի, ռումինների և այլ ժողովուրդների մոտ, տե՛ս **Հովհաննիսյան Ս. Հ.**, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, Երևան, 1976, էջ 124:

2 **Հովհաննիսյան Ս. Հ.**, նշվ. աշխ., էջ 122:

3 **Նշվ. աշխ.,** էջ 123:

թյան օրինական ձևը հնուց ի վեր եղել է աղջիկների ծնողներին պատգամախոսությամբ դիմելը: Ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերություններով պայմանավորված՝ երբեմն այնպես է ստացվել, որ փեսան նշանադրությանը չի ներկայացել: Հարցն այն է, որ ծնողները մեծ իշխանություն ունեին որդիների վրա, և որդիները լիովին վստահում էին իրենց ծնողներին: Մեծամասամբ հարսնացուի ընտրությունը վստահում էին մեծ մայրերին, որոնք մեծ հարգանք էին վայելում ընտանիքում: Չնայած, որ տղային հարսնացու ընտրելու համար հրավիրվում էին գերդաստանի տղամարդիկ, հատկապես մեծ էր մորեղբոր դերակատարությունը[1], սակայն այս հարցի շուրջ քննարկումներում վճռական խոսքը պատկանում էր տոհմի տարեց կանանց[2]: Փաստորեն, այս ամենից պարզ երևում է, որ խնամախոսության կարևոր առաքելությունը հիմնականում վստահվել է ընտանիքի կանանց, ինչը վկայում է զավակների ամուսնության հարցում ընտանիքի կնոջ մեծ դերակատարության մասին: Պետք է սակայն նշենք, որ նա միայնակ որոշումներ չէր կայացնում և ընտանիքի մեծերի ու տղամարդկանց հետ խորհրդակցելուց հետո միայն նա կարող էր ստանձնել այդ սուրբ պարտականությունը: Տանտիկինը խնամախոսության միջոցով աղջկա մորից պարզում էր՝ ընդունելու՞ է առաջարկը, թե՞ ոչ: Աղջկա մայրը նախապես հրավիրում էր եղբայրներին խորհրդակցության, լսում նրանց կարծիքը[3]: Այստեղ ակնհայտ են հայկական ընտանիքներում իշխող կարգերը, որոնք շատ տիպիկ ձևով բացահայտում են հայ կնոջ փոխհարաբերություններն իր ընտանիքի անդամների հետ: Տեսնում ենք, որ կինը միանձնյա որոշումներ չէր կայացնում ընտանեկան կարևորագույն հարցերում, սակայն իր մասնակցությունն էր ունենում որոշումներ կայացնելու ընթացքին: Սա արդեն խոսում է հայոց ամուսնահարսանեկան արարողություններում կնոջ կարևորագույն դերի մասին: Ավելին, տղայի ամուսնության կազմակերպումը մոր գործն էր[4]: Երբեմն պատահել է այնպես, որ հարսնացուին հավանել են ոչ թե մայրերը, այլ

---

[1] Մորեղբոր կարծիքը կարևորելու սովորությունը մնացորդ է մայրիշխանության ժամանակներից, տե՛ս **Լիսիցյան Ս.**, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 186:

[2] **Նահապետյան Ռ.,** Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը, Երևան, 2007, էջ 20-21:

[3] **Նույն տեղում**, էջ 21-22:

[4] **Նույն տեղում,** էջ 21:

ընտանիքի ազապ աղջիկները կամ փոքր հարսները՝ հարսնացու ընտրելով իրենց ընկերուհիներից[1]:

Հարսնացու ընտրելիս հայերի շրջանում նախ ստուգվում էր ազգակցության աստիճանը՝ մինչև յոթ պորտ, քանի որ մերձավոր ազգականների ամուսնությունն արգելված էր[2]: Այնուհետև, խիստ կարևոր էր դավանանքը, որովհետև խնամական կապերը հայ առաքելականների և հայ կաթոլիկների միջև չէին խրախուսվում: Հարսնացուի ընտրության հարցում որոշ առումով հաշվի էր առնվում նաև սոցիալական դրությունը՝ ձգտելով գոնե իրենց հավասար կարողություններով ընտանիքի հետ բարեկամանալ[3]: Հարսի մոր կերպարը նույնպես շատ հատկանշական ազդեցություն է ունեցել ամուսնության գործում, քանի որ, ինչպես ժողովուրդն է ասում՝ “մորը տես՝ աղջկան ուզի»: Երբ տղայի ծնողներն ընտրում են որևէ աղջկա, նկատի են առնում հատկապես այդ աղջկա մոր բարոյական հատկությունները[4]:

Հայկական միջավայրում աղջիկ հավանելու և ուզելու գործում մեծ դեր էր խաղում նաև աղջկա «ջհեզը»՝ օժիտը[5]: Օժիտը համարվել է նախկինում հարսնացուի համար տրվող գլխագնին փոխարինող երևույթ[6]: Եթե նախապես աչքի տակ համապատասխան թեկնածու չունեին, ապա անցնում էին աղջիկտեսի[7]: Այս առաքելությունը, ինչպես նշվեց, վստահ-

---

1 **Լալայեան Ե.**, Բորչալուի գաւառ, Ամուսնութիւն և հարսանիքի սվորութիւններ / **ԱՀ,** Գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 214:

2 Մանրամասն տե՛ս **Դալլաքյան Լ.**, Մերձամուսնությունների խնդիրը հայոց եկեղեցական և սովորութային իրավունքի տեսանկյունից / **Հայագիտության հարցեր**, 2 (26), Երևան, 2022, էջ 135:

3 Կնոջ և տղամարդու սոցիալական վիճակի և ինչքային դրության անհամապատասխանության և դրա դառը հետևանքի վերաբերյալ մի քանի պատմություններ են հայտնի Ա. Ղանալանյանի մոտ: Տե՛ս **Ղանալանյան Ա.,** Ավանդապատում, Երևան, 1969, էջ ՁԲ-ՁԴ:

4 **Լալայեան Ե.,** Վարանդա, Ընտանեկան բարք. Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ / **ԱՀ,** Գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 120:

5 **Շահազիզ Եր.,** Նոր Նախիջեւանը և Նոր նախիջեւանցիք, Ծեսեր և սովորութիւններ / **ԱՀ,** Գիրք 7-8, Թիֆլիս, 1901, էջ 76:

6 **Ковалевский М.,** Законь и обычай на Кавказье, Том 1, Москва, 1890, стр. 135.

7 Գամիրքում, ըստ տեղական սովորույթի, գիտեին, որ երկուշաբթի կամ երեքշաբթի օրերին աղջիկտեսի են գալիս, ուստի այդ օրերին իրենց տներն առավել մաքուր ու դասավորված էին պահում: Տե՛ս **Թեմուրճյան Վ. Ս.,** Գամիրքի հայերը / **Հայ ազգագրու-**

ված էր տղայի կողմի 3-4 կանանց, որոնք գեղեցիկ հագնվում, զարդարվում ու գնում էին աղջկա տուն[1]: Վ. Բդոյանը նշում է, որ պատգամախոսությունից առաջ տղայի կողմի կանանցից մեկը գաղտնի կարգով շոշափում էր աղջկա ծնողների տրամադրությունը, որից հետո միայն ազդեցիկ տղամարդկանց պատգամախոս էին ուղարկում[2]: Պատգամախոսության կամ խնամախոսության արարողակարգը աղջկա կողմի դրական պատասխանի դեպքում ավարտվում էր խոսքկապով: Խոսքկապին հաջորդում էր նշանը կամ ժողովրդական լեզվով ասած՝ "բեհը»: Ե. Շահազիզը նշում է, որ նախիջևանցիները շատ հաճախ նշանադրության իմաստն արտահայտելու համար գործածում էին այս տաճկական բառը, որը նշանակում էր գրավական, առահավատչյա[3]: Փոխաբերական իմաստով "բեհ» բառը կարող է նշանակել նաև նշանադրություն: "Բեհը» կատարում էին խոսքկապից մի քանի օր հետո: Երբեմն էլ ծախսերը մեկտե-

---

թյուն և բանահյուսություն, Հ. 1, Երևան, 1970, էջ 115: Տղայի մերձավոր հարազատները, երբեմն նաև հաշվի առնելով երիտասարդների ցանկությունը, բայց հիմնականում ղեկավարվելով տոհմական շահերով, գնում էին ընտրած աղջկա ծնողների "դուռը թակելու»: Ընտրությունը կատարվում էր այն հեռանկարով, որ ազգատոհմը և տոհմանդամ ընտանիքը համալրեին աշխատավոր ու տոհմին զորավիգ կանգնող սերնդով: Աղջիկ ընտրելու հարցում հիմնականում հաշվի էին առնվում նրա ազգուտակը, ընտանիքը, ծնողների վարքագիծը, հեղինակությունը համայնքում, ունեցվածքը, դասային պատկանելությունը, և միայն վերջում՝ աղջկա անձնական հատկանիշներն ու ֆիզիկական բարեմասնությունները: Տե՛ս **Նահապետյան Ռ.**, Հայոց սոցիանորմատիվ մշակույթը, Մաս 1, Երևան, 2009, էջ 56-57: Նշանադրության ծեսին նախորդում էր խնամախոսության արարողակարգը: Գերդաստանի նահապետն իր մերձավոր կանանցից կամ տղամարդկանցից մեկին ուղարկում էր աղջկա հոր տուն՝ տեղեկանալու՝ իրենց աղջկան որևէ մեկին խոսք տվել են, թե ոչ, որն այնուհետև ավարտվում էր խնամախոսությամբ, տե՛ս **Նահապետյան Ռ.,** Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը, էջ 20-21: Խնամախոսությունը այլ կերպ ասում են նաև հարսնախոսություն, և այս շատ կարևոր առաքելության համար ընտրվում են հատուկ մարդիկ տղայի բարեկամների կողմից, որոնք կոչվում են "դիբոնչի», տե՛ս **Շահազիզ Եր.**, նշվ. աշխ., էջ 76:

1 "**Գյումրի», Քաղաքը և մարդիկ,** Գյումրի, 2009, էջ 243-244:

2 **Բդոյան Վ. Հ.,** Հայ ազգագրություն, Համառոտ ուրվագիծ, Երևան, 1974, էջ 138:

3 Գրավականը որևէ բանի իրագործման ապացույցն է, առհավատչյան, երաշխիքը, տե՛ս **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Հատոր Ա, Երևան, 1976թ., էջ 262:

ղելու համար խոսքկապն ու բեհը միացնում էին իրար[1]:

Երբ երկու կողմերն էլ համարում էին, որ խանգարող հանգամանք չկա, տղայի հայրը, հորեղբայրը, քեռին, երբեմն նաև ուստան (եթե տղան արհեստ էր սովորում) հավաքվում էին սրճարանում, որտեղ հրավիրվում էին նաև աղջկա հարազատները: «Աչքալուսանք» էին խմում, որով հաստատվում էր խնամիությունը՝ թույլ տալով տղային ու աղջկան իրար տեսնել[2]: Փաստորեն, միայն ծնողների համաձայնությունից հետո էր թույլատրվում փեսացուի և հարսնացուի տեսակցությունը: Անտեսվում էր երիտասարդների կարծիքը, և դրանով արդեն իսկ ոտնահարվում նրանց ամուսնական իրավունքը: Հակոբ պատրիարք Նալյանը նշում էր, որ նշանը չպետք է լինի սոսկ աղջկա ծնողների և ազգականների հաճությամբ, այլ հենց իր հաճությամբ[3]: Նշանադրությունը համարվում էր կայացած, եթե այն օրհնվում էր քահանայի[4] կողմից[1]: Գրիգոր Տաթևացին

---

1 **Շահազիզ Եր**., նշվ. աշխ., էջ 80:

2 **Գյումրի,** քաղաքը և մարդիկ, Կենցաղը, ծեսերը, տոները, Գյումրի, Ընտանիքը և ընտանեկան կենցաղը, էջ 242: Գյուղերում եղել է սովորություն, որ տղան չէր կարող տեսնել աղջկան մինչ հարսանիքի օրը, ուստի շատ հաճախ նա չէր մասնակցում ո՛չ խոսքկապին, ո՛չ էլ բեհին: Աղջկա կողմը փոխադարձ մատանին ուղարկում է փեսային կամ բեհի օրը կամ էլ մոտակա մեծ տոներից մեկի ժամանակ (Ս. Ծնունդ, Ս. Սարգիս, Բարեկենդան, Միջինք. Ծաղկազարդ, Զատիկ): Տե՛ս **Շահազիզ Եր**., նշվ. աշխ., էջ 82: Իսկ երբ փեսան մասնակցում էր խոսքկապին, նրա հետ սովորաբար աղջկա տուն էր գալիս եղբոր կինը կամ մեկ ուրիշ կին՝ բարեկամուհիներից: Մի փոքր խոսակցությունից հետո աղջիկը, իր երեսը քողով ծածկած, թեյ էր մատուցում: Երիտասարդի հետ եկած կինն աշխատում էր բանալ աղջկա երեսը և տեսնել նրա գեղեցկությունը, ապա համբուրում էր նրա ճակատը, և եթե մատանի էին իրենց հետ բերել, այդ մատանին դնում էր հարսնացուի մատին, տե՛ս **Լալայեան Ե.,** Վարանդա, Ընտանեկան բարք. Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ, էջ 122:

3 **ՄՄ,** N 2858, **Յակոբ Նալեան,** Կրթութիւն աստուածաբանական խորհրդոցն եկեղեցւոյ, էջ 363ա:

4 Ե. Լալայեանը նույնպես խոսում է քահանաներին հարսի տուն պատգամախոս ուղարկելու սովորության մասին: Երբ ծնողները որոշում են մի որևէ աղջիկ ուզել իրենց տղայի համար, հրավիրում են քահանա, հյուրասիրում են նրան թեյով ու հացով, ապա խնդրում պատգամ գնալ այդ աղջկա հոր տուն և խնդրել աղջկա ձեռքն իրենց տղայի համար: Երբ քահանան գնում է աղջկա տուն, գովում է աղջկա հորն ու նրանց գերդաստանը, թվարկում է երիտասարդի արժանիքները և խնդրում աղջկա ձեռքը: Աղջկա հայրը, եթե նույնիսկ մտածում է թույլ տալ այդ ամուսնությունը, այնուամենայնիվ, դրական պատասխան չի տալիս քահանային՝ պատճառաբանելով, թե պետք է խորհր-

“Նորին դարձեալ վասն Պսակին» քարոզում ասում է. “Քահանայն է օրհնող նշանին և պսակին, և առանց նրա ո՛չ կարէ լինիլ»[2]:

Քահանան նշանն օրհնում էր այդ առիթով տրված հացկերույթի ժամանակ: Նա էր բաժանում ներկաների մեջ նշանի հետ բերված սրբազան հալվան, նշանադրությանը տալիս էր հասարակական բնույթ, որով արդեն վկայվում էր տղայի և աղջկա միջև հաստատվելիք կապի վավերականությունը[3]: Գյումրվա ամուսնական սովորույթներին ծանոթանալիս տեսնում ենք, որ բուն նշանադրության ժամանակ քահանան շարական է երգում, որից հետո փեսան հարսնացուի մատին մատանի է դնում, և

դակցի ընտանիքի մյուս անդամների հետ: Այնինչ, բացասական կարծիք ունենալու դեպքում միանգամից կտրուկ մերժում էր: Բացի քահանայից, աղջկա հոր տուն էին գնում նաև տղայի ազգականներից և հարևաններից մի քանիսը՝ կրկին պատգամախոսության համար: Աղջկա հայրը մի քանի օրից պատասխանում է տղայի ընտանիքի կողմից ուղարկված պատգամախոսներին: Տե՛ս **Լալայեան Ե.**, Ջավախք, Ընտանեկան բարք, ամուսնութիւն և հարսանեաց սովորոյթներ / **ԱՀ,** Գիրք Ա, Շուշի, 1896, էջ 235-236: Կարծում ենք, որ սա կապված է այն հանգամանքի հետ, որ տեղի քահանաները ծանոթ էին գրեթե բոլոր ընտանիքներին: Շատ հաճախ քահանան, երբ տեսնում էր, որ այդ ընտանիքները կամ այդ աղջիկն ու տղան անհամապատասխան են միմյանց, փորձում էր համոզել տղայի ընտանիքին ընտրել մեկ ուրիշ աղջկա: Փաստորեն՝ Հայոց եկեղեցու և նրա հոգևորականի կարևոր դերակատարությունը պարզորոշ դրսևորվում է ոչ միայն բուն Պսակի արարողության ժամանակ, այլև դրան նախորդող արարողակարգերում:

[1] Ե. Լալայանը բերում է “շալակի նշանադրության օրինակը», երբ մի որևէ երիտասարդ ցանկանում է խնդրել իր հավանած աղջկա ձեռքը, բայց ամաչում է, լուռ ու մունջ և գաղտագողի “շալակ» է տանում նրանց տուն: Տղան վերցնում էր մի քթոց, մեջը թարմ մրգեր ու չիր էր լցնում, կապում քթոցն ու տանում դնում իր հավանած աղջկա դռան առաջ: Մի քանի անգամ այսպես անելուց հետո աղջկա ազգականներից մեկի միջոցով հայտնում էր, որ “շալակ» տանողն ինքն է: Եթե աղջկա ծնողները համաձայնում էին իրենց աղջկան այդ տղային կնության տալ, քթոցի մեջ դնում էին եփած հավ, մի քանի ձու, մի քանի գաթա, մի զույգ գուլպա ու ուղարկում տղային: Ահա այսպիսի լուռ ծիսակատարությունից հետո այդ տղան ու աղջիկը համարվում էին նշանված: Տե՛ս **Լալայեան Ե.,** Վարանդա, Ընտանեկան բարք. Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ, էջ 114: Այսպիսի սովորութական ծիսակատարություններից էլ պարզ երևում է, որ նշանադրությունները համարել են կայացած նույնիսկ առանց քահանայի միջնորդության:

[2] **Տաթևացի Գ.,** Գիրք Քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741թ., էջ 199:

[3] **Լիսիցյան Ս.**, Զանգեզուրի հայերը, էջ 186:

դրանով նշանը պաշտոնապես համարվում է կայացած[1]: Մեր օրերում ոչ միշտ է, որ հետևում են այս կարգին: Շատ զույգեր նշանվում են առանց քահանայի օրհնության: Սա վկայությունն է այն բանի, որ նշանադրության գեղեցիկ ծեսը ժամանակի ընթացքում եկեղեցական-քրիստոնեական հարթությունից տեղափոխվել է ավելի կենցաղային հարթություն:

Նշանադրության որոշված օրը փեսացուի տանից աղջկա տուն էին ուղարկում մի ոչխար (իհարկե եթե փեսացուն հարուստ էր)՝ ճակատը սպիտակ ու կարմիր ներկած, պոզերից ու վզից խնձորներ և ընկույզի շարուկ ձգած: Այս ամենն աղջկա տուն տանողը նվեր էր ստանում և հյուրասիրվում: Տղայի տանը հավաքվում էին նախ քահանան, քավորը և տանտերը: Նրանք վերցնում էին մի խնձոր[2], մեջը դնում արծաթյա կամ ոսկյա մի մատանի ու տան կանանց կողմից մի քանի աբասի խրում: Քահանան վերցնում է խնձորը, շնորհավորում և մի աբասի էլ ինքն էր խրում մեջը: Այսպես խնձորը փոխանցում էին բոլոր հյուրերին, որպեսզի նրանք ևս խնձորի մեջ մետաղադրամ դնեն: Հետո խնձորը դնում էին չարղաթի[3] մեջ՝ երկու զույգ կանաչ-կարմիր քոշերի[4] հետ, որոնցից մի զույգը հարսնացուի համար է, իսկ մյուսը՝ նրա մոր: Այս ամենից հետո աղջկա տանից մի երիտասարդ էր գալիս և բոլորին հրավիրում տուն: Սկզբնական շրջանում փեսացուն չէր գնում հարսանցուի տուն, հետո մի քանի գյուղերում սովորույթը սկսեց փոխվել: Երբ բոլորը հավաքվում էին, հնչում էին մի շարք բարեմաղթանքներ, այնուհետև մի կնոջ առաջնորդությամբ հարսնացուն, երեսը մինչև գոտին չարղաթով ծածկած, գալիս էր և կանգնում քահանայի մոտ: Այդ ժամանակ քահանային էին մոտեցնում սկուտեղով մատանին, մի քանի մոմ և մրգեղեն: Քահանան օրհնում

---

1 “**Գյումրի», Քաղաքը և մարդիկ,** էջ 242:

2 Նշանը բերում էին մի խնձորի կամ նռան մեջ խրած: Սրանով խրախուսվում էր, որ հարսն էլ խնձորի կամ նռան պես բազմանալու ընդունակություն ունենա: Նշանադրությունից հետո երկու ընտանիքների միջև սկսում էին խնամիական մտերիմ հարաբերություններ: Երկու կողմերն իրենց վրա էին վերցնում իրար նկատմամբ խնամք, հոգատարություն դրսևորելու պարտականությունը: Տե՛ս **Լիսիցյան Ս.**, նշվ. աշխ., էջ 186-187:

3 Մետաքսե գլխաշոր՝ քող. տե՛ս **Աղայան Է.,** Արդի հայերենի բացատրական բառարան, Հատոր Ա, էջ 1158:

4 Առանց ճտքի և երեսը բաց կոշիկ՝ ոտնաման, տե՛ս **Աղայան Է.,** Արդի հայերենի բացատրական բառարան, Հատոր Բ, 1976, էջ 1576:

էր այդ ամենը, հետո վերցնում էր մատանին ու տալիս փեսացուին, որն էլ այն անցկացնում էր հարսնացուի մատնեմատին, եթե իհարկե փեսացուն մասնակցում է արարողակարգին: Իսկ եթե նա ներկա չէր լինում, հարսնացուին առաջ չէին բերում, այլ աղջկա մայրը օրհնած չարղաթը տանում ու գցում էր նրա գլխին և մատանին անցկացնում մատը: Եղել են նույնիսկ դեպքեր, երբ տղան քաղաքից կամ գյուղից բացակայել է, և տղայի փոխարեն հարսացուի տուն են տարել նրա գլխարկը: Այնուհետև, օրհնված սկուտեղը մոտեցնում էին հյուրերին, որոնք օգտվում են քաղցրեղենից, հետո մետաղադրամ էին խրում խնձորի մեջ: Այդ հավաքած գումարը, որը Վարանդայի բարբառով "հարսնացուին տված թաս» էր կոչվում, պատկանում էր հարսնացուին, որից որոշ գումար հատկացնում էին նաև քահանային և հարսին առաջ բերող կնոջը: Այս ամենից հետո սկսում էին քեֆ անել մինչև առավոտ[1]: Այնուհետև, նշանվածներին տանում էին տղամարդկանց սենյակ և կանգնեցնում սկեսրայրի կողքին: Մի քանի կարևոր կենացից հետո հարսին տանում էին կանանց սենյակ, նստեցնում սկեսրոջ կողքին, բայց նա չէր ուտում, քանի որ դա համարվում էր անպատշաճություն[2]:

Աշխարհիկ և կանոնական օրենսդրությամբ ընդունված կարգի համաձայն՝ առաջարկությունն ընդունած աղջկա հարազատներն իրավունք ունեին պահանջելու փեսացուի մերձավորներից որոշակի գործողություններով օրինականացնել նշանադրության պարտավորությունը: Փեսացուի հարազատները պարտավոր էին փեսացուի և քահանայի մասնակցությամբ սահմանված օրը այցելել հարսնացուին և նրա հարազատներին՝ նշանադրությունն օրինականացնելու համար: Քահանայի մասնակցությունը պայմանավորված էր նշանադրության և պսակադրության կարգի և պայմանների պահպանման անհրաժեշտությամբ: Նշանադրության օրինականությունն ապահովելու համար հոգևոր իշխանության ներկայացուցչի մասնակցությունը նշանադրությանը պարտադիր համարվեց[3]:

Նշանադրության ժամանակ կողմերի հարազատների միջև համաձայնություն չէր կայացվում աղջկա գնի վերաբերյալ: Վաղ ավատական

---

[1] **Լալայեան Ե.,** Վարանդա, Ընտանեկան բարք. Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ, էջ 122:

[2] "**Գյումրի», Քաղաքը և մարդիկ,** էջ 242:

[3] **Հովհաննիսյան Ս. Հ.,** նշվ. աշխ., էջ 134:

շրջանի նյութերը բավարար հիմք չեն տալիս պնդելու, որ հայ կինը նշանադրության ժամանակ եղել է վաճառքի օբյեկտ կամ հոր սեփականության իրավունքի օբյեկտ: Մատանին, ոսկին, դահեկանը, հագուստը և ուտելիքը, որոնք նշանադրության կապակցությամբ հանձնվում էին հարսնացուին և նրա հարազատներին, չի կարելի դիտել իբրև հարսնացուի արժեքի համարժեք: Դրանք աղջկա գինը չեն խորհրդանշել: Հարսնացուին հանձնվող մատանին եղել և մնում է մի առարկա, որի հանձնումը խորհրդանշել է նշանադրության պարտավորության ծագում: Նշանադրությունն առանց մատանու կամ նշանը խորհրդանշող այլ առարկայի չի պատկերացվել[1]: Նշանադրության կարևոր նախապայմանը մատանու առկայությունն էր: Մատանին համարվում էր այն նշանը, որ այդ աղջիկն արդեն մեկին խոստացված է: Հակոբ Նալյանը նշում է, որ նշանը պարտադիր գինդով և ապարանջանով է կատարվում[2]:

Համաձայնությունից հետո որոշվում էր գլխագին, որ տղայի կողմը պարտավոր էր տալ աղջկա կողմին: Ե. Լալայանը նշում է, որ երբեմն գլխագին որոշելու համար երկար սակարկություններ են լինում, ինչը նույնիսկ կարող է ձգվել մի քանի օր: Վերջնական փոխզիջումներից հետո տղայի կողմը վճարում էր աղջկա գլխագինը[3]:

Հնում ընդունված չէր, որ հարսն ու փեսան երկար ժամանակ մնան նշանված: Ինչպես նշում է Ե. Լալայանը, հարսն ու փեսան նշանված մնում էին 3-6 ամիս կամ մինչև մեկ տարի: Այդ ընթացքում նրանք հազվադեպ կարող էին իրար տեսնել: Միայն Բարեկենդանի ժամանակ էր հնարավոր, որ փեսան երեք օր, գիշեր-ցերեկ մնա իր նշանածի տանը[4]:

Առհասարակ ընդունված է եղել գրեթե բոլոր և նամանավանդ տաղավար տոներին հարսին նվերներ տանել, որը "փայ» էին կոչում: Կանչում էին աղջկա բարեկամ կանանց, հյուրասիրում գաթայով և քիշմիշով, այնուհետև ցույց տալիս նվերները: "Փայերը» սովորաբար տանում էին Զատկին, Վարդավառին, Սուրբ Աստվածածնի վերափոխման օրը, սեպ-

---

1 **Նույն տեղում,** էջ 128:

2 **ՄՄ,** N 2858, **Յակոբ Նալեան,** Կրթութիւն աստուածաբանական խորհրդոցն եկեղեցւոյ, էջ 362:

3 **Լալայեան Ե.**, Ջավախք, Ընտանեկան բարք, ամուսնութիւն և հարսանեաց սովորոյթներ, էջ 235-236:

4 **Նույն տեղում,** էջ 241:

տեմբերին[1] և Վարագա Սուրբ Խաչին: Սրանցից պարտադիր էին Զատիկը, Վարդավառը և Մարիամ Աստվածանի վերափոխման տոնը[2]: Շատ հետաքրքրական է այն փաստը, որ "փայը» տանում էին տղամարդիկ՝ առանց փեսայի: Ենթադրվում է, որ այդ ընծաները հարսին պետք է տանեին փեսայի կողմի կանայք, բայց տեսնում ենք, որ այդ պարտականությունը դրված էր ընտանիքի տղամարդկանց ուսերին: Մեր օրերում հարսնացուի տուն նվերներ են տանում հիմնականում Զատկի տոնին: Նվերների հետ միասին դնում են նաև քաղցրավենիք: Տոները կարգավորել են ամուսնական հարաբերությունների գրեթե բոլոր փուլերը, այդ թվում նշանվածների փոխայցելություններն ու նվիրատվությունները: Վարդավառի առթիվ, նույնիսկ 21-րդ դարասկզբին, նորապսակների և նշանվածների ազգականները միմյանց նվերներ են մատուցում՝ հիմնականում միրգ, հագուստ ու զարդեղեն[3]:

Ջավախքում տիրող սովորույթի համաձայն, նշանադրությունից հետո աղջիկը տանից դուրս չի գալիս, մինչև որ տալը կամ տեգոր կինը չգա և իրեն չտանի զբոսանքի: Հարսնացուին հիմնականում տանում էին կանաչ և ծաղիկներով լի վայր, որպեսզի իրենց հարսը կանաչի պես կանաչի և ծաղկի պես ծաղկի: Երբեմն, կիրակի օրերին հարսնացուին տանում էին հանդերը բանջար հավաքելու, այն էին լցնում պարկի մեջ և նրան շալակել տալիս, որ աշխատասեր ու գործունյա լինի: Այսպիսի զբոսանքները մշտապես ուղեկցվում էին խաղերով, երգով ու պարով[4]: Վայոց ձորի գաղթականների շրջանում Ս. Գրիգոր Լուսավորչի տոնին (Գրիգոր Լուսավորչի մուտն ի վիրապ), որը նշվում էր Մեծ Պասի հինգերորդ շաբաթ օրը, նորահարսի սկեսուրը և զբոսանքի ու խնջույքի նպատակով հրավիրված բարեկամ կանայք գնում էին դաշտ՝ իրենց հետ ծիսական ուտեստ վերցնելով: Այդ զբոսանքը հայտնի էր "գեաշտ» անունով[5]:

---

[1] Սեպտեմբերին հարսին "փայ» տանում էին հունձի ժամանակ: Աղջկա տուն էին ուղարկում մրգեր և մի զույգ կոշիկ: Տղայի տնեցիները, բացի "փայ» տանելուց, հարսին նաև տանում էին զբոսանքի մի որևէ ուխտատեղի: Տե՛ս **Լալայեան Ե.**, Ջավախք, Ընտանեկան բարք, ամուսնութիւն և հարսանեաց սովորոյթներ, էջ 245:

[2] **Նույն տեղում**:

[3] **Մկրտչյան Ս.,** Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, 2016, էջ 215:

[4] **Լալայեան Ե.**, Ջավախք, Ընտանեկան բարք, ամուսնութիւն և հարսանեաց սովորոյթներ, էջ 245:

[5] **Մկրտչյան Ս.,** Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, 2016, էջ 75-76:

Ե. Լալայանը առանձնացնում է նշանադրության մի քանի տարբերակներ: Շատ հաճախ աղջիկներին մանկության շրջանում էին նշանում: Մանուկ հասակում աղջիկներին նշանելու սովորույթից բացի, կար նաև օրորոցախազի սովորույթը[1], որը նորածիններին նշանադրելու և հասունանալիս պսակելու կարգ էր[2]:

Օրորոցախազի[3] սովորույթը երբեմն դրսևորվել է մինչև երեխաների լույս աշխարհ գալը: Երբեմն պատահել է այնպես, որ երկու հղի կին, միմյանց շատ սիրելով և կապված լինելով բարեկամական կապով, խոստացել են, որ տարասեռ երեխաներ լույս աշխարհ բերելու դեպքում, նրանց կպսակեն: Այնուհետև, երբ երեխաները ծնվում էին, նրանք խազում էին օրորոցները՝ ի նշան երեխաների նշանադրության: Հետո այս երկու ընտանիքները սկսում էին խնամիական հարաբերություններ

---

[1] Օրորոցախազի ժամանակ աղջկա կրծքից արծաթե մի դրամ էին կախում, Տե՛ս **Լալայեան Ե.**, Զանգեզուր, Ընտանեկան բարք. Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ / **ԱՀ**, Գիրք Դ, Թիֆլիս, 1898, էջ 70:

[2] **Բդոյան Վ. Հ.,** Հայ ազգագրություն, Համառոտ ուրվագիծ, էջ 138:

[3] Օրորոցախազի նշանադրություն կատարվել է հիմնականում այն դեպքում, երբ ընտանիքները մտերիմ են եղել և դրանով ավելի են ամրապնդել իրենց բարեկամությունը: Այս սովորույթը կատարվել է նաև այն ժամանակ, երբ ընտանքի մի երեխան մահանում էր, մյուսին օրորոցում նշանում էին, որպեսզի այդ երեխան մահացածի բախտն ապրեցնի: Այդպիսի նշանադրության ժամանակ ծնողները խաչաձև "քեարտում» էին օրորոցը և վրան կարմիր ու կանաչ թել կապում: Տե՛ս **Լալայան Ե.,** Գանձակի գաւառ, Ընտանեկան բարք, ամուսնութիւն եվ հարսանիքի սովորութիիններ / **ԱՀ,** Գիրք Զ, Թիֆլիս, 1900, էջ 245: Օրորոցախազի սովորությունը հիմնականում կատարվել է միմյանց համակրող երկու գերդաստանների միջև, երբ օրինակ մի ընտանիքն ուներ մի քանի տարեկան տղա երեխա և ուխտ էր անում նշանադրել նրան մյուս ընտանիքի՝ սպասվող աղջկա հետ: Այսպիսի դեպքերում, երբ աղջիկը ծնվում էր, տղայի հայրը խազում էր նրա օրորոցը կամ եռագույն մի թել կապում օրորոցի լծից՝ սրանով նշանադրելով երկու փոքրիկներին: Երբեմն էլ պատահում էր, որ փոքրիկ տղաները համակրանք էին ցույց տալիս դեպի փոքրիկ աղջիկները, և նրանց հայերը խոստանում էին պսակել նրանց, երբ մեծանային: Այդ խոստումից հետո այս երկու փոքրիկները համարվում էին նշանված: Եթե նշանած աղջիկը մահանում էր, հաճախ պատահում էր, որ տղան նրա քրոջ հետ էր ամուսնանում, իսկ եթե տղան էր մահանում, նրա եղբայրն էր ամուսնանում աղջկա հետ: Երբեմն պատահում էր նաև, որ հիվանդության, ընտանիքի դժբախտության կամ այլ պատճառներով այդպիսի նշանադրությունները լուծարվում էին: Տե՛ս **Լալայեան Ե.,** Վարանդա, Ընտանեկան բարք. Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ, էջ 113-114, 118:

պահպանել միմյանց հետ, իսկ երեխաները մանկության հասակում խաղում էին միասին[1]: Ակնհայտ է, որ հայոց նահապետական ընտանիքների ամուսնական սովորույթներում այս մոտեցումը բավականին ծայրահեղ էր, քանի որ տան մայրերը, դեռևս ներարգանդային կյանքում, տնօրինում էին իրենց զավակների ճակատագիրը:

Ե. Լալայանը նշում է նաև ծաղկազարդի նշանադրության մասին, որի ժամանակ տղայի մայրը, նախապես ստանալով հարսնացուի ծնողների համաձայնությունը, ծաղկազարդի երեկոյան հարսնացուի գլխին մի կարմիր քող էր ձգում և մի խաչանիշ մոմ էր տալիս նրա ձեռքը, որի վրա կարմիր և կանաչ թել էր կապված: Բացի թելից, մոմի վրա կարող էր անցկացված լինել նաև մի արծաթյա մատանի: Այս ամենից հետո աղջիկը համարվում էր նշանված[2]:

Այնուհետև, ուշագավ է Ե. Լալայանի հաղորդումը Վարդավառի նշանադրության մասին, որի ժամանակ նշանվել ցանկացող երիտասարդի մայրը, նախապես ստանալով հավանած աղջկա ծնողների համաձայնությունը, բռնում էր այդ աղջկա ձեռքը, բերում զուռնաչու առաջ, որպեսզի աղջիկը պարեր: Աղջիկն սկսում էր պարել, իսկ նրա ապագա սկեսուրը մի քանի պտույտ էր անում շուրջը, հետո մոտենում, համբուրում վերջինիս և մի խնձոր տալիս, որի մեջ նախապես մատանի կամ արծաթյա դրամ էր դրած լինում: Աղջիկը խնձորը ձեռքին շարունակում էր պարել, հետո սկեսուրի բարեկամները “շաբաշ» էին տալիս հարսին, այն պարի վերջում նա տալիս է երաժիշտներին, այնուհետեև խնձորը ձեռքին վազում ընկերուհիների մոտ: Այդ պահից սկսած՝ այդ աղջիկը համարվում էր նշանված այդ կնոջ տղայի հետ[3]: Այս գեղեցիկ ծիսակատարություն մեջ հստակ երևում է, որ նշանադրության բուն գործողությունները կատարում են սկեսուրը և հարսը, իսկ փեսան դիտորդի դերում է: Սա նույնպես վառ վկայությունն է այն բանի, որ ամուսնության հարցում տղայի մոր դերակատարությունը շատ մեծ է: Առավել զարգացած շրջաններում, սակայն, երիտասարդն ունենում էր իր մասնակցությունը այս ծիսակա-

---

1 **Լալայեան Ե.,** Բորչալուի գաւառ, Ամուսնութիւն և հարսանիքի սվորութիւններ, էջ 214:

2 **Լալայեան Ե.,** Վարանդա, Ընտանեկան բարք. Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ, էջ 116:

3 **Լալայեան Ե.,** Գանձակի գավառ / **ԱՀ,** Գիրք Զ, Թիֆլիս, 1900, Ընտանեկան բարք, ամուսնութիւն եվ հարսանիքի սովորութիւններ, Գանձակի գավառ, էջ 246:

տարությանը: Նա ինքն էր շաբաշ տալիս աղջկան, և եթե վերջինս վերցնում էր արծաթյա դրամը, նշանակում է տալիս էր իր համաձայնությունը[1]:

Հայոց մեջ գոյություն է ունեցել նաև "թոնրի նշանի» կամ "թոնրի պսակի» սովորությունը: Ժողովուրդը սուրբ է համարում թոնիրը: Գրեթե բոլոր գյուղերում թոնիր շինելիս՝ կանչում էին քահանային, որ օրհնի թոնիրը և մի քանի տեղ մեռոն քսի: Թոնրի նշանը կամ պսակը գլխավորապես տեղի էր ունենում, երբ գյուղում եկեղեցի չէր լինում, երբ եկեղեցում ննջեցյալ էր լինում, երբ ամուսնացողներն այրիներ էին[2], երբ կար ամուսնացողների չհասություն, և երբ հարսնացուն բարոյական կյանք չէր ունեցել:

Ամենից տարածվածը սովորական նշանադրություն էր, երբ տղայի ծնողներն իրենց մի քանի բարեկամների հետ գնում էին աղջա հոր տուն՝ տանելով ալանի, խմիչք և քաղցրեղեն: Քողով ծածկված հարսնացուին կանանց սենյակից բերում էին տղամարդկանց մոտ, կանգնեցնում երիտասարդի կողքին, քահանան հարցնում էր նրանց փոխադարձ համաձայնությունը, այնուհետեև փեսացուն մատանին դնում էր հարսնացուի աջ ձեռքի մատնեմատին, ապա քահանան օրհնում էր նրանց, և զույգը համարվում էր նշանված[3]:

Նշանադրությունից հետո մի կարևոր սովորույթ էլ կար, որը Գյումրիում հայտնի էր "քյասաբիչան» անունով: Սա հարսանիքի օրն ու պայմանները որոշելու ծեսն էր: Փեսայի հայրը մի քանի հարգված և տարիքավոր հարազատների հետ գնում էր հարսի տուն՝ որոշելու հարսանիքի օրն ու հարսնառի մասնակիցների թիվը, օժիտը տանելու օրն ու այն բերողների թիվը: Սովորաբար աղջկա կողմը զիջում էր խնամիներին ու համաձայ-

---

[1] **Նույն տեղում:**

[2] Հիշատակություններ կան նաև այրիների նշանադրության մասին: Ըստ այդ հիշատակությունների՝ այրի կնոջ ձեռքը խնդրում էին նրա սկեսուրից և սկեսրայրից: Սկեսուրն իր մեռած որդու հագուստներից մեկը տալիս էր փեսային, իսկ փեսան մի թաշկինակ կամ մի դանակ էր նվիրում հարսնացուին և նրանից ստանում մի այդպիսի նվեր, որով և նշանադրությունը կատարված էր համարվում: Տե՛ս **նույն տեղում**: Այրի կանանց ամուսնության վերաբերյալ մանրամասն տե՛ս նաև **Դալլաքյան Լ.,** Այրի կանանց կարգավիճակը հայոց եկեղեցական կանոնների և ժողովրդական ավանդույթների համատեքստում / **Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու,** Է, Երևան, 2022, էջ 125-139:

[3] **Լալայեան Ե.,** Գանձակի գավառ Ընտանեկան բարք, ամուսնութիւն և հարսանիքի սովորութիիններ, էջ 246:

նում նրանց առաջարկների հետ[1]:

Եկեղեցական կանոնական իրավունքն անմասն չի մնացել նշանադրության ծեսին առընչվող հարցերում: Բայց այս հարցում եկեղեցու միջնորդությունը լայն ծավալներ չի ընդգրկում, ինչպես, օրինակ բուն պսակի կամ ամուսնության հարցերում: Եկեղեցու հայրերի կողմից և առանձին ժողովների շրջանակում մշակվել են որոշ կանոններ: Այդ կանոնները նպատակ են ունեցել կարգավորել նշանադրության ծեսը և ավելի հաստատուն հիմքերի վրա դնել այն՝ իբրև պսակի նախնական պատրաստություն[2]: Նշանադրության ժողովրդական դրսևորումներին անդրադառնալիս՝ նշեցինք քահանայի կարևոր դերակատարության մասին: Քահանաները, լսելով նշան դնելու լուրը, յուրաքանչյուրը պետք է գնար իր խոստովանորդու մոտ և լսեր նրանցից ամեն մեկի ամուսնանալու ցանկության մասին: Ապա՝ նշանվողների ազգականներին ժողովելով մի տեղ, պետք է քններ նշանադրության պայմանները և հետո գնար գանձապետի և գործակալի մոտ:

Գործակալը, գանձապետի հետ քննելով նշանադրության պայմանները[3], երբ տեսնում էր, որ ոչ մի արգելք չկա, տղայի քահանայից վերցնում էր մատանին և տալիս հարսնացուի քահանային՝ աղջկան տանելու համար, «ի հաստատութիւն նշանեալ լինելոյ նորա», որից հետո անունները գրվում էին տումարում: Վերջում քահանաները և վկաները ստորագրում էին: Այդ արձանագրության համարը պետք է տային փեսացուի քահանային, որ վերջինս պահեր իր մոտ, որ հարսանիքի աթոռահասը հատուցելիս[4] ներկայացներ գանձապետին: Նշանադրությունից մինչև հարսանիք նշանակվում էր վեց ամսվա ժամանակամիջոց, իսկ հարգելի պատ-

---

1 “**Գյումրի», Քաղաքը և մարդիկ,** էջ 245:

2 **Մելիք Թանգյան Ն. Վ.**, Հայոց եկեղեցական իրավունքը, Ա Գիրք, Ս. Էջմիածին, 2011, էջ 560-561:

3 «Երբ պատրաստվում են նշան դնել որևէ աղջկա մի որևէ երիտասարդի համար, կանայք կամ բնակիչները (և քահանան) չհանդգնեն այդ անել առանց երկար քննության և առանց առաջնորդի գիտության»: Տե՛ս **Ավագյան Ռ.,** Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IX – մ.թ.ա. XIXդ.), Եևան 2001, էջ 24:

4 Աթոռին, հատկապես Էջմիածնի Մայր Աթոռին տրվող տուրքը. տե՛ս **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, Երեւան, 1969, էջ 12:

ճառ առաջանալու պարագայում կարելի էր նաև երկարացնել[1]: Առաջնորդները պետք է հոգ տանեին, որ երկու կողմերի միջև ավելորդ ծախսեր չլինեին, "բաչլը» (տուրք, հարկ) կոչված պահանջը վերանա, որովհետև շատ հաճախ այն խռովությունների տեղիք էր տալիս և նշանադրության քակտման պատճառ դառնում: Երբ կողմերի միջև տեղի էր ունենում մի որևէ թյուրիմացություն, նույնիսկ օրինությամբ կատարված նշանը հաճախ հետ էր վերադարձվում: Այս պարագայում կողմերի միջև կարող էին առաջանալ ծախսերի վերաբերյալ խնդիրներ: Այս պարագայում քահանայի համար ևս դժվարանում էր նշանը լուծարելու խնդիրը, իսկ եթե կողմերը միմյանցից ֆինանսական պահանջներ չէին ունենում, նշանը լուծարվում էր նույնիսկ առանց հոգևորականի[2]: Նշանադրությունը լուծարելու համար պետք է դիմեին առաջնորդին կամ նրա հաջորդին. եթե օրինավոր պատճառ լիներ, նշանի լուծարումը թույլ էր տրվում, և պետք է հայտնեին գանձապետին ու գործակալին, որ նշանադրության տումարից հանվեին անունները: Այս պարագայում, եթե բացի նշանադրության մատանուց մինչև հարսանիքի օրը այլ իրեր էին տվել հարսնացուին, նշանի լուծարման պարագայում այդ իրերը պետք տրվեին այրիներին ու որբերին, և կողմերը միմյանցից դրանք պահանջելու իրավունք չունեին:

Հայոց եկեղեցական կանոնների շարքում կան "Հարց Հետեւողաց»[3] կոչված կանոններ: 27 կանոնից բաղկացած այս շարքի 19-րդ կանոնն ասում է, որ պսակից առաջ եթե նշանվածները հարաբերություն ունենան, թող որ պոռնիկի ապաշխարության արժանանան և ապա պսակվեն[4]:

Կեսարիայի, երկրորդ Նիկիական և Ս. Ներսեսի կանոնախմբերը հավաստում են, որ իբրև հեթանոսական շրջանի վերապրուկ Հայաստանում որոշ տարածում ուներ "խաւսեալ կնոջ» փոխարեն նրա քրոջ հետ

---

[1] Տղամարդու արդարացված բացակայության պայմաններում պատահել է, որ զույգը նշանադրված է մինացել մինչև յոթ տարի: Տե՛ս **Լալայեան Ե.,** Վարանդա, Ընտանեկան բարք. Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ, էջ 130:

[2] **Մելիք Թանգյան Ն. Վ.**, նշվ. աշխ., Բ Գիրք, էջ 806-807:

[3] Բառացի թարգմանությամբ նշանակում է այն սուրբ հայրերի կանոնները, որոնք առաքյալներից հետո են կարգվել, որովհետև պարզ ասվում է «Յետ առաքելոց սրբոց հարցն հետեւողաց», այսինքն առաքյալների հաջորդ սուրբ հայրերի կանոններ, որ պարզ ապացուցում է, թե մեկի գրածը չէ, այլ ծաղկաքաղ է արված այլ հայրերի գրվածքներից: Տե՛ս **Մելիք Թանգյան Ն. Վ.**, նշվ. աշխ., Ա Գիրք, էջ 420:

[4] **Համաբարբառ Կանոնագիրք Հայոց**, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2020, էջ 678:

ամուսնանալը: Այս երևույթը ողբերգական վախճան էր ունենում, և կանոնական իրավունքը սուր պայքար էր մղում նրա դեմ[1]:

Անկյուրայի ժողովի[2] 12-րդ կանոնը խոսում է նշանված աղջիկների առևանգման մասին: Կանոնում ասվում է, որ եթե նշանված աղջկան առևանգում են և նույնիսկ բռնություն գործադրում նրա նկատմամբ, միևնույն է, նա պետք է վերադառնա իր նշանածի մոտ[3]: Նույն սահմանումը տրվել է Նիկիայի 2-րդ ժողովի ժամանակ՝ առանց որևէ փոփոխության[4]: Այս մասին կրկնում է նաև Բարսեղ Կեսարացին՝ մի փոքր այլ ձևակերպմամբ: Նա ասում է, որ նշանված աղջկան առևանգողը պետք է այդ աղջկան հնարավորություն տա ետ վերադառնալու իր նշանածի մոտ, բայց եթե առևանգված աղջիկը նշանված չէ, և վերջինիս ծնողները համաձայնում են, նրանք կարող են ամուսնանալ: Բարսեղ Կեսարացին նաև այս հանցանքի համար սահմանում է պատիժ՝ 4 տարվա ապաշխարանք[5]:

Անկյուրայի Վերջին՝ 25-րդ կանոնը սահմանում է, որ եթե նշանված տղան իր նշանածի քրոջ հետ մեղանչի և հղիության պատճառ դառնա, ապա պետք է թողնի վերջինիս և իր նշանածի հետ ամուսնանա[6]: Նույնը կրկնում են նաև Կեսարիայի ժողովի 9-րդ և Նիկիայի երկրորդ ժողովի 32-րդ կանոնները[7]:

Բարսեղ Կեսարացին ունի մի կանոնախումբ ևս՝ զանազան ախտերից ազատվելու մասին, որի 272-րդ գլխի 209-րդ կանոնով սահմանում է, որ քահանայի և 2-3 վկաների ներկայությամբ և հաստատմամբ կայա-

---

1 **Հովհաննիսյան Ս. Հ.,** նշվ. աշխ., էջ 139:

2 Անկյուրայի և Կեսարիայի ժողովների կանոնները միացված են իրար: Մերոնք վերցրել են Անկյուրայի ժողովի 25 կանոններից 20-ը, իսկ մնացած 5-ը դարձրել են Կեսարիայի ժողովի կանոններ: Դրանց ավելացնելով ևս մի քանի կանոն, դարձրել են Կեսարիայի 10 կանոն: Մանրամասն տե՛ս **Մելիք Թանգյան Ն. Վ**, նշվ. աշխ., Ա Գիրք, էջ 162:

3 **Կանոնագիրք Հայոց**, հատոր Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 162-163:

4 **Համաբարբառ Կանոնագիրք Հայոց**, էջ 682:

5 **Կանոնագիրք Հայոց**, հատոր Ա, էջ 343-344. **Համաբարբառ Կանոնագիրք Հայոց**, էջ 678: **Մելիք Թանգյան Ն. Վ.**, նշվ. աշխ., Ա Գիրք, էջ 201: Ի դեպ, Կանոնագիրք Հայոցում այս հոդվածը թվագրված է 12-րդ համարի ներքո, իսկ Մելիք Թանգյանն այն նշում է որպես 22-րդ հոդված:

6 **Մելիք Թանգյան Ն. Վ.**, նշվ. աշխ., Ա Գիրք, էջ 169-171:

7 **Համաբարբառ Կանոնագիրք Հայոց**, էջ 678, 682:

ցած նշանադրության պարագայում տղամարդը չի կարող թողնել իր նշանածին և ուրիշի հետ նշանվել՝ բացառությամբ աղջկա անբարո վարքի կամ մարմնական արատավորության պարագայի: Այս կանոնի նմանությամբ 211-րդ կանոնով սահմանվում է, որ եթե եկեղեցական նշանադրության պարագայում մինչ եկեղեցի մտնելը աղջկա արատավորությունը պարզ է դառնում, ապա տղան ազատ է որոշելու նշանվել, թե արձակել կնոջը: Բայց եթե արդեն մտել են եկեղեցի և նշանը կայացել է, ապա այլևս իրավունք չունի արձակելու, իսկ եթե այնուամենայնիվ արձակի, ապա 3 տարվա ապաշխարության պետք է ենթարկվի: 220-րդ կանոնով ասվում է, որ եթե եկեղեցու և քահանայի կողմից հաստատված նշանի պարագայում նշանված աղջկա ծնողները որոշում են բռնությամբ իրենց աղջկան ուրիշի հետ ամուսնացնել, ապա այդ տեսակ պսակը պետք է անվավեր համարվի:[1]

Հայոց եկեղեցու Շահապիվանի ժողովի 3-րդ կանոնը ընդարձակ անդրադարձ է կատարում նրանց, ովքեր կենակցում են իրենց նշանածի հետ: Այդ դեպքում տղամարդը պետք է անարգության տուգանք վճարի այնքան, որքան պահանջում են աղջկա հայրն ու մայրը: Իսկ եթե նորից կամենա նույն աղջկա հետ ամուսնանալ, նախ երկուսով պետք է ապաշխարությամբ մաքրվեն, հետո նոր ամուսնանան: Ընդ որում, պսակը պետք է լինի ոչ թե կույսի, այլ երկակի՝ միայն խաչակնքելով: Կանոնը հաջորդ կետով ավելացնում է, որ եթե զույգից մեկը կույս է, իսկ մյուսը ոչ, ապա կույսի պսակն օրհնվի օրինավոր կերպով, իսկ մյուսինը՝ իբրև երկակի, այսինքն՝ խաչակնքել ուռը և դնել գլխին՝ իբրև նշան թշնամու հաղթության[2]:

Հայկական եկեղեցական ժողովների շարքում հիշատակվում է 1651թ. Երուսաղեմի մասնավոր ժողովը, որի 12-րդ կանոնը վերաբերում է նշանադրության արարողությանը: Կանոնում մասնավորապես ասվում է, որ եթե աղջկան և տղային նշանելու հարց է առաջանում, ապա քահանան միանգամից, այսինքն առանց երկար բարակ քննության թող նշան չդնի: Նախախպես պետք է համոզվի, որ նշանվող զույգերը չափահասության տարիքին համապատասխանում են, և դրանից հետո միայն նշանի նրանց[3]:

---

[1] **Նույն տեղում**, էջ 682:

[2] **Նույն տեղում**, էջ 680: Տե՛ս նաև **Մելիք Թանգյան Ն. Վ.**, նշվ. աշխ., Ա Գիրք, էջ 268:

[3] **Մելիք Թանգյան Ն. Վ.**, նշվ. աշխ., Ա Գիրք, էջ 71, էջ 408:

Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Ամենայն հայոց կաթողիկոսի 1869թ. կոնդակում ներկայացված նշանադրությանը վերաբերող կանոնների համաձայն քահանան անպատճառ պետք է քննի նշանադրության բոլոր պայմանները. արդյո՞ք նշանվողները հավանում են միմյանց, համապատասխանում են չափահասության տարիքին, ազգակցական ինչ հեռավորություն ունեն կամ չունեն, ծնողները համաձայն են արդյո՞ք այդ միությանը և այլն: Այնուհետև Գևորգ Ե-ն խոսում է գանձապետի պաշտոնի մասին, որը նշանադրության օրը պարտադիր պետք է եկեղեցում լիներ՝ գործակալ քահանայի մոտ՝ և նրա հետ միասին քննելու նշանադրության պարագաները[1]:

Ուսումնասիրելով նախաամուսնական որոշ սովորույթները և դրանց շուրջ ձևավորված եկեղեցական իրավունքի մոտեցումները՝ տեսնում ենք, որ հայոց մեջ բացի բուն ամուսնական կանոնային ու սովորութային դրսևորումներից, ոչ պակաս նշանակություն են ունեցել նաև նախաամուսնական արարողակարգերը: Դրանք կարևորվում են հատկապես կանանց՝ այս պարագայում հարսնացուների, հանդեպ հասարակական մոտեցման տեսանկյունից: Հատկանաշական է հարսնացուի նկատմամբ տղայի կողմի պատասխանատվության դրսևորումը: Կարևորվում է նաև եկեղեցու մոտեցումը, չնայած տեսանք, որ եկեղեցական միջնորդությունն այս հարցում առավել կազմակերպական բնույթ է կրում: Բայց, այնուամենայնիվ, չենք կարող չընդգծել, որ նշանված աղջկա վերաբերյալ եկեղեցական կանոնադրությունը մշակել է կանոններ, իհարկե քիչ թվով, որոնք որոշակիորեն պահպանում են վերջինիս շահերը և դրանց տալիս առավել օրինական բնույթ: Խոսքը վերաբերում է հատկապես չափահասության տարիքին, փոխադարձ համաձայնությանը վերաբերող կանոններին, ինչպես նաև նշանադրությանը չխոչընդոտող այլ հանգամանքների մանրազննին ուսումնասիրությանը, ինչն արդեն իսկ խոսում է հասարակության մեջ կանանց դերի արժևորման մասին:

Բանալի բառեր *– խնամախոսություն, խոսքկապ, նշանադրություն, հարսնացու, փեսացու, ծես, քահանա, մատանի, գլխագին, եկեղեցական կանոն:*

---

[1] **Նույն տեղում,** էջ **510:**

ТРАДИЦИИ СВАТОВСТВА И ПОМОЛВКИ СРЕДИ АРМЯН

Лиана Даллакян

Ключевые слова: *сватовство, сговор, помолвка, невеста, жених, обряд, священник, кольцо, выкуп, церковный канон.*

В статье предпринимается попытка анализа ритуала, предшествующего армянскому христианскому таинству венчания – помолвке. Помимо самого обряда, рассмотрены также некоторые, связанные с ним, ритуальные действия, которые носили чисто обыденный характер, но со временем выражали важнейшие ценностные характеристики брачной обрядовой системы армянского народа. Хотя это были порядки бытового характера, церковь играла в них значительную роль посредством своего духовного представителя.

С точки зрения церковно-канонического права Армянская Апостольская Церковь не проявляла сильной активности в отношении обряда помолвки, а лишь выражала свою позицию по некоторым вопросам, что характерно особенно для позднего периода истории церкви. Она, в частности, касалась вопросов совершеннолетия, степени родства, взаимного добровольного согласия лиц, вступающих в брак, проведения помолвки в церкви, а также в случае недопонимания сторон расторжения помолвки.

Таким образом, помолвка, наряду со всеми предшествующими и последующими ее обрядами, является необходимым и важным условием для закладывания основ новой семьи и совершения таинства венчания.

THE CUSTOMS OF COURTSHIP AND ENGAGEMENT IN ARMENIA

Liana Dallakyan

Key words: *courtship, khosqkap, engagement, bride, bridegroom, ceremony, priest, ring, glkhagin, church canon*

The article mainly makes an attempt to analyse one the ceremonies of the marriage that precedes the main marriage ritual, which is the engagement ceremony. The article also considers some other minor ceremonies that precede both the engagement and marriage ceremonies and they constitute the part, even important and valuable part of the custom for the Armenian people. It refers to the choosing a bride and sending people to the parent for courtesy. Despite the fact that those ceremonies were mainly of domestic character, the Church, in the face of

its representative, also played great role and brought its active participation in both big and small rituals. The Armenian Apostolic Church did not show active involvement in the matter, but at later periods the Church started to consider such matters as the age, the relatedness or connection by blood or kinship of the people engaged, as well as the cases when the misunderstanding of the parties involved could cause to spiflication of the couple.

Summing up we would like to mention that the engagement with its all preceding and following rituals has always considered to be the ceremony that creates the cornerstone of the newly created family as well as on the basis of which the marriage ritual is carried out.

Լիանա Դալլաքյան *- ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Կրոնի պատմության և տեսության ամբիոնի լաբորանտ*

Лиана Даллакян *- лаборант кафедры Богословия факультета Богословия ЕГУ*

Liana Dallakyan *- assistant of chair of Theology at the YSU Faculty of Theology*